



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների  
նախարարություն  
«Ատոմային էլեկտրակայանների շահագործման  
հայկական գիտահետազոտական ինստիտուտ»  
Փակ բաժնետիրական ընկերություն  
«ՀԱՅԱՏՈՍ»

22.11.2024թ. № 238

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ  
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ  
ՊԱՐՈՆ ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆԻՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Համաձայն ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի №2695-Ա առ 08.11.2024թ. հրամանի, ս.թ. Նոյեմբերի 11-ից 15-ը գործուղվել եմ ք. Վիեննա (Ավստրիայի Հանրապետություն)՝ մասնակցելու Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) կողմից կազմակերպված հետազոտական միջուկային ռեակտորներին նվիրված միջազգային կոնֆերանսին (այսուհետ՝ Կոնֆերանս) «International Conference on Research Reactors: Achievements, Experience, and the Way to a Sustainable Future» թեմայով: Կոնֆերանսին մասնակցում էին 45 երկրների միջուկային էներգետիկայի մասնագիտակցված կազմակերպություններից հրավիրված շուրջ երկու հարյուրից ավել մասնագետներ: Մեր հարևան երկրներից մասնակցում էին Իրանը և Թուրքիան:

Կոնֆերանսի բացման խոսքով հանդես եկավ ԱԷՄԳ գլխավոր տնօրեն պարոն Ռաֆայել Գրոսսին, ով անդրադարձավ «Միջուկային հետազոտական ռեակտորներին» դերի նշանակությանը, դրանց կարևորությանը նոր միջուկային տեղակայանքների մշակման և նախագծման, բժշկական սարքավորումների ստեղծման և կիրառման, միջուկային տեղակայանքների կադրերի պատրաստման խնդիրներին:

Աշխատանքային 5 օրվա ընթացքում կատարվեցին 80-ից ավել զեկույցներ, այն երկրների կողմից, որոնք շահագործում են հետազոտական ռեակտորներ:

Աշխարհում այսօր 54 երկրներում շահագործվում են 234 հետազոտական ռեակտորներ, համեմատելու համար նշեմ, որ աշխարհում ատոմային էլեկտրակայաններ ունեն 31 երկրներ, որտեղ շահագործվում է 413 ռեակտոր, իսկ 59 ռեակտորներ գտնվում են կառուցման փուլում:

Կոնֆերանսի ընթացքում հիմնականում քննարկվեցին հետազոտական ռեակտորներում իրականացվող 3 հիմնական ուղղություններով տարվող աշխատանքները՝

- Նոր միջուկային ռեակտորների ստեղծման նյութագիտության ուսումնասիրությունը, ինչպես նաև նրանցում օգտագործվող նոր միջուկային վառելիքի ստացման և փորձարկման խնդիրները;
- Բժշկական ժամանակակից սարքավորումները օգտագործելով իզոտոպների ստացման խնդիրները;
- Ատոմային էներգիայի բնագավառում կադրերի պատրաստման խնդիրը՝ հետազոտական ռեակտորների բազայի հիման վրա:

Մի քանի երկրներում կառուցվում են նոր հզոր միջուկային հետազոտական ռեակտորներ: Ավարտին է հասցվում նոր միջուկային բազմաֆունկցիոնալ հետազոտական ռեակտորներ Արգենտինայում «RA-1», «Ki-Jang» Հարավային Կորեայում, «Julies Hiriwitz» Ֆրանսիայում, բազմաֆունկցիոնալ արագ նեյտրոններով հետազոտական ռեակտորը (МБИР) Ռուսաստանի Դաշնությունում և այլն: Ակտիվ աշխատանքներ են կատարվում նշված ուղղությամբ արաբական և աֆրիկյան երկրներում: 14 երկրներ արդեն ունեն ծրագրեր ԱԷՄԳ-ի հետ՝ կառուցելու նոր հետազոտական ռեակտորներ՝ Բանգլադեշ, Բելառուս, Չինաստան, Հնդկաստան, Նիդեռլանդներ, Նիգերիա, Ֆիլիպիններ, Հարավային Աֆրիկա, Տաջիկստան, Թայլանդ, ԱՄՆ, Վիետնամ, Ջամբիա և այլն: Մի քանի երկրներ էլ պլանավորման փուլում են կառուցելու հետազոտական ռեակտորներ, որոնց թվում են նաև Ադրբեջանը և Իրաքը:

Հայաստանի Հանրապետությունը Եվրոպական տնտեսական գոտու շրջանակում հնարավորություն ունի մասնակելու «МЦИ МБИР» ծրագրով տարվող աշխատանքներին: Շատ լավ հնարավորություն է ստեղծված օգտագործելու մոտ ապագայում МБИР շահագործման հանձնելուց հետո ՀՀ մասնագետների մասնակցությունը հետազոտական աշխատանքներին և հետագայում օգտվելու հետազոտման արդյունքներից:

Կոնֆերանսի մասնակից երկրներին, այդ թվում Հայաստանի Հանրապետությանը, տրվեց հնարավորություն օգտվելու Կոնֆերանսում զեկուցված նյութերից:

Միջազգային կոնֆերանսին փակման խոսքով հանդես եկավ ԱԷՄԳ Գլխավոր տնօրենի տեղակալ պարոն Կովալչուկը, ով շնորհակալություն հայտնեց կոնֆերանսի մասնակիցներին և կազմակերպիչներին՝ կարևորելով միջուկային հետազոտական ռեակտորների դերն ու նշանակությունը և այս բնագավառում երկրների միջև փորձի փոխանակման անհրաժեշտությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՓԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ



ՎԱՀՐԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ